ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1081-Ա «21» մարտի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.135 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության հ.Ն/8910-25 գրությունը՝ Շենգավիթ վարչական շրջանի, Շիրակի փողոցի հ.4/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով մանկապարտեզին տրամադրելու մասին:

Շենգավիթ վարչական շրջանի, Շիրակի փողոցի հ.4/4 հասցեի անշարժ գույքը (0.230046հա հողամաս, 1594.66քմ մակերեսով շինություն)՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.02.2025թ. վկայական հ.10022025-01-0075, գաղտնաբառ՝ 55ABE3K4SDAH/:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, 466-րդ և 468-րդ հոդվածներով, պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Շենգավիթ վարչական շրջանի, Շիրակի փողոցի հ.4/4 հասցեում գտնվող՝ 1594.66քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 2300.46քմ մակերեսով հողամասը՝ համաձայն ԱՁ Սոֆիա Ավագյանի 01.09.2024թ. տրված հատակագծերի՝ անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի ապրիլի 1-ը ժամկետով, տրամադրել «Երևանի հ.135 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանի հ.135 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել.

1) համաձայնագիր՝ Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 12-ի հ.394-Ա որոշման հիման վրա՝ Շիրակի փողոցի հ.4/4 հասցեի 899.83քմ մակերեսով տարածքի և

զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 2300.46քմ մակերեսով հողամասի համար 2016 թվականի օգոստոսի 18-ին կնքված գույքի անհատույց օգտագործման հ.1101 պայմանագիրը լուծելու մասին.

2) գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ Շենգավիթ վարչական շրջանի, Շիրակի փողոցի հ.4/4 հասցեի 1594.66քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 2300.46քմ մակերեսով հողամասը տրամադրելու մասին՝ դրան կցելով տրամադրվող տարածքի հատակագիծ-սխեման.

3. Ընդունել ի գիտություն, որ

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը և համաձայնագիրը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում.

2) պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Երևանի հ.135 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ